

2023–2027 Հնգամեայ Ծրագիր



Հայկական
Համայնքներու
Բաժանմունք

2023–2027 Հնգամեայ Ծրագիր



Հայկական
Համայնքներու
Բաժանմունք

2023–2027

Five-Year Programming Plan

Armenian Communities Department
Calouste Gulbenkian Foundation

Հնգամեայ Ծրագիր

Հայկական Համայնքների Բաժանմունք
Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութիւն

Plano de Atividades

Serviço das Comunidades Arménias
Fundação Calouste Gulbenkian

2023–2027

Five-Year Programming Plan
Հնգամեայ Ծրագիր
Plano de Atividades

Lisbon | Լիզպոն | Lisboa 2024

Armenian Communities Department
Հայկական Համայնքերու Բաժանմունք
Serviço das Comunidades Arménias

Բովանդակություն

1. Նախաբան

2. 2023–2027

Հնգամեայ ծրագիր

- Ներածական
- Արեւմտահայերէն լեզու
- Մշակութային ստեղծագործութիւն եւ զարգացում
- Հետազոտութիւն եւ քննական ներգրաւուածութիւն Հայաստանի մէջ
- Համալսարանական կրթանպաստներ
- Յատուկ պարագաներու նպաստ

3. Եզրակացութիւն

Նախաբան

Երբ 2013-ին միացայ Գալուստ Կիլալենկեան Հիմնարկության, ինձի վստահուած առաջին գործը Հայկական Համայնքներու Բաժանմունքին հնգամեայ ռազմավարական ծրագիրի պատրաստութիւնն էր: 2014–2018-ի ծրագիրը մեր գործունէութեան հիմքը դրաւ, որուն առանցքը կը կազմէր արեւմտահայերէնի եւ մեր համալսարանական կրթանպաստներու ծրագիրին վերաշխուժացումը: Մեր առաջին ծրագիրը ունէր չորս առաջնահերթ ոլորտներ.

- Հայ լեզուի եւ մշակոյթի պահպանում, Սփիւռքի զարգացում եւ կրթութեան ուղղութեամբ ներդրում,
- Կենսունակ Հայաստանի կերտում՝ ներդրումներ կատարելով երկրի երիտասարդութեան եւ քաղաքացիական հասարակութեան մէջ,
- Հայ-թրքական երկխօսութեան բարելաւում եւ պատմութեան հասարակաց ըմբռնումի խթանում,
- Հայ գրական ժառանգութեան պահպանում եւ հասանելիութիւն:

Երկրորդ Հնգամեայ ծրագիրը, որ կ'ընդգրկէր 2019–2023 տարիները, շարունակուեցաւ նախորդին առաջնահերթութիւններով, սակայն որոշ բարեփոխումներու ենթարկուեցաւ: Մասնաւորաբար բարեփոխուեցան Բաժանմունքի Կրթանպաստներու ծրագիրին ենթաբաժինները՝ յաւելեալ շեշտ դնելով հայագիտութեան ոլորտին վրայ: Տարեկան մէկ միլիոն Եւրօ՝ Բաժանմունքին պիտոճէին մօտաւորապէս 30 առ հարիւրը, կը յատկացուի համալսարանական եւ հետազօտական կրթանպաստներու, ինչ որ տարբեր համեմատութիւններով տրամադրած ենք 1957-էն՝ Հայկական Համայնքներու Բաժանմունքին հիմնադրութենէն ի վեր: 2019–2023-ի ծրագիրով շնորհած ենք կրթանպաստներ հետեւեալ ենթաբաժիններուն մէջ.

1. Հայագիտության ընթացաւարտ աստիճանի կրթանպաստներ,
2. Հայագիտական հետազոտութիւններու կարճաժամկէտ նպաստներ,
3. Գիտաժողովներու եւ ճամփորդական կարճաժամկէտ նպաստներ
Հայաստանի մէջ երիտասարդ հետազոտողներու համար,
4. Բարգաւաճող երկիրներու հայ ուսանողներու համար նախընթացաւարտ
կրթութեան նպաստներ,
5. Փորթուկալի մէջ ուսանող հայ համալսարանականներու
կրթանպաստներ,
6. Անմիջական կրթանպաստներ չնախատեսուած կացութիւններու
պարագային:

Բաժանմունքը 2014-էն 2023-ի միջեւ նշանակալից յաջողութիւններ արձանագրեց թէ նպաստատուութեան եւ թէ կրթանպաստներու իր ծրագիրներուն մէջ: Ներդրումներ կատարեց նախագիծերու եւ գործընկերներու ուղղութեամբ որոնք իրականացուցին կարելոր նախաձեռնութիւններ: Բաժանմունքը, կրթանպաստներու միջոցով կարելոր մասնակցութիւն բերաւ ապագայ արհեստավարժներու եւ հմուտ անձերու պատրաստութեան մէջ: Տասը տարուան ժամանակամիջոցին, շուրջ հազար նախագիծեր ստացան ընդհանուր 16 միլիոն Եւրոյի նպաստ 40 տարբեր երկիրներու մէջ, եւ յատկացուեցաւ ընդհանուր 9.3 միլիոն Եւրոյի 1,800 կրթանպաստ: Նախագիծերու եւ կրթանպաստներու շնորհուած ընդհանուր գումարը հասաւ 25,250,000 Եւրոյի:

2014-էն 2023-ի միջեւ Հայկական Համայնքներու Բաժանմունքին հիմնական իրագործումները կարելի է խտացնել առանցքային երեք կէտերու մէջ:

Նախ՝ Բաժանմունքին յարաճուն ճիգերուն եւ նպատակաուղղուած նպաստատուութեան շնորհիւ ամրապնդուեցաւ արեւմտահայերէնը: Թէեւ լեզուին դիմագրաւած վտանգները յստակ են եւ յաճախ կը քննարկուին, իրականութեան մէջ Հիմնարկութիւնը նկատելի միջոցներ կը յատկացնէ ապահովելու անոր կենսունակութիւնը: Օրինակ՝ Yertik.com մանկապատանեկան դաստիարակչական տեսանիւթերը մօտաւորապէս 300.000 անգամ դիտուած են 57 երկիրներու մէջ: Ֆրանսայի մէջ կայացող Զարմանազան ամառնային ճամբարը ունեցած է հարիւրաւոր մասնակիցներ: Ուսուցիչներու զարգացման «Ուս Հարթակ» առցանց ծրագիրը կապ հաստատած է 16 երկիրներէ շուրջ 500 ուսուցիչներու միջեւ: Zndoo.com հարթակը կը պարունակէ արեւմտահայերէնով 1200 մանկավարժական նիւթեր, որոնք կը գործածուին 45 երկիրներէ հազարաւոր անձերու կողմէ: Յաւելեալ նպաստ տրամադրած ենք հայ համայնքներու բազմաթիւ դպրոցներու, տարբեր երկիրներու մէջ:

Ներդրումներ կատարած ենք լեզուին առնչուած թեքնաբանական շատ մը ծրագիրներու մէջ՝ ինչպէս թուայնացումի լայնածաւալ աշխատանքներ եւ ուղղագրիչներու ստեղծում: Միախարեան Միաբանութեան պարբերաթերթերու թուայնացումի նախագիծին շնորհիւ թուայնացուած եւ ցանկագրուած է 1,000,000 էջէ աւելի գրաւոր ժառանգութիւն. բոլոր նիւթերը հասանելի են ձրի եւ բաց ձեւաչափով: Իսկ Nayiri.com անշրջանցելի կայքէջը ամսական դրութեամբ

190,000 օգտատեր ունի եւ 1.7 միլիոն այցելու աշխարհի չորս կողմերէն: Նայիրիի համահայկական ուղղագրիչները յոյժ կարեւոր թեքնաբանական գործիքներ են հայերէնի երկու լեզուաճիւղերուն համար, ձրիօրէն հասանելի հազարաւոր մարդոց, թէ Android թէ iOS համակարգերով:

Լեզուի կենսունակութեան պարունակին մէջ օժանդակած ենք նաեւ հայալեզու հեղինակներու, թարգմանիչներու եւ հրատարակիչներու, հասանելի դարձնելու համար բազմաթիւ արեւմտահայերէն գրութիւններ:

Իսկ մեր նորագոյն ներդրումը եղած է ապահովել լեզուի ժամանակակցութիւնը եւ առնչելիութիւնը մշակոյթի միջոցով՝ որպէս լեզուի եւ համայնքներու փոխակերպումի եւ կայունութեան ազդու գործիք: 2021-ին մեկնարկեցինք «արդ եւս» մշակոյթի ծրագիրը, հովանաւորելով տասնեակ նորարարական եւ ստեղծագործ նախաձեռնութիւններ, որոնց շնորհիւ արեւմտահայ մշակոյթը առնչուեցաւ միջազգային մշակութային պատումներուն, միաժամանակ թարմացնելով արեւմտահայերէնը:

Երկրորդ՝ հովանաւորելով հետազոտութիւններ եւ թարգմանութիւններ, Բաժանմունքը բանալի դեր մը խաղաց հայագիտութեան բնագաւառը արդիականացնելու մէջ, ներմուծելով ժամանակակից նիւթեր եւ նոր մտածողութիւն ու մօտեցումներ Հայաստանի մէջ՝ միջազգային կարեւոր գրութիւններու թարգմանութեամբ ու տարածումով: Ընկերային գիտութիւններու վրայ համաաշխարհային ներգործութիւն ունեցած գիրքեր այժմ առկայ են հայերէնով (թէ արեւելահայերէն եւ թէ արեւմտահայերէն): Նպաստընկալ դոկտորականի թէզեր յաւելեալ շեշտ դրած են ներկայի հարցերու վրայ, իսկ հովանաւորուած հետազոտութիւններ ընդգրկած են ժամանակակից հայ-թրքական յարաբերութիւնները, Արցախի պատերազմը եւ Սփիւռքագիտութիւնը:

Վերջապէս՝ Բաժանմունքին կրթանպաստներու ծրագիրը աշխարհի տարածքին օժանդակած է հազարաւոր ուսանողներու, զանազան բնագաւառներու մէջ, յատկապէս՝ հայագիտութեան, եւ նպաստած է զարգացած հայ երիտասարդներու, հմուտ արհեստավարժներու, ապագայ ղեկավարներու, մտաւորականներու ու դրական փոփոխութիւն բերող անձերու պատրաստութեան: 2014–2023 երկարող տասնամեակին շնորհած ենք տարբեր չափի 1,800 կրթանպաստ հետեւեալ բաժանումով: 130 կրթանպաստ միջազգային ճանաչում վայելող համալսարաններու մէջ ընթացաւարտ աստիճանի (մագիստրոս եւ դոկտորական) հայագիտութեան համար, մօտ 500 կարճաժամկէտ նպաստ հայագիտական հետազոտութեան համար, աւելի քան 400 կրթանպաստ բարգաւաճող երկիրներէ նախընթացաւարտ աստիճանի ուսանողներու (բոլոր նիւթերու մէջ) եւ 650 նպաստ Հայաստանէն երիտասարդ գիտնականներու, որպէսզի մասնակցին արտասահմանի մէջ գիտաժողովներու կամ վերապատրաստումի ծրագիրներու: Շուրջ 160 կրթանպաստ յատկացուած ենք նաեւ այլ ենթաբաժիններով:

Այս ամփոփ հրատարակութեամբ կը ներկայացնենք 2023–2027-ի մեր Հնգամեայ ծրագիրը, 2023-ը ըլլալով անցումային տարի մը: Աշխատանքային

այս նոր ծրագիրը կ'արտացոլէ թէ՛ շարունակականություն եւ թէ՛ փոփոխություն: Արեւմտահայերէնի վերաշխուժացումը եւ ամրապնդումը, ինչպէս նաեւ համալսարանական կրթանպաստները կը մնան մեր գործունէութեան առանցքը: Սակայն նշանակալից բարեփոխումներ կան այլուր, ինչպէս՝ նոր շեշտադրում դնել ժամանակակից հայ մշակութային ստեղծագործութեան վրայ եւ յաւելեալ ուշադրություն դարձնել ժամանակակից հարցերու վերաբերող հետազոտութեան ու Հայաստանի մէջ քննական մտածողութեան յառաջդիմութեան: Միւս կողմէ, ստեղծուած է «Յատուկ պարագաներու նպաստ»՝ չնախատեսուած նախաձեռնություններու եւ մարդասիրական օժանդակութեան համար:

Մեր տարեկան գործունէութեան մանրամասնությունները կարելի է գտնել Հիմնարկութեան միամեայ զեկոյցներուն, ինչպէս նաեւ մեր հովանաւորած նախագիծերուն եւ շնորհած կրթանպաստներուն ցուցակներուն մէջ, որոնք տարեկան դրութեամբ կը հրապարակուին Բաժանմունքին կայքէջին վրայ:

Ռազմիկ Փանոսեան, տնօրէն
Հայկական Համայնքներու Բաժանմունք
Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութիւն
Դեկտեմբեր 2024, Լիզպոն

2023–2027 Հնգամեայ Ծրագիր

**Five-Year Programming Plan
Plano de Atividades**

Ներածական

2023-ին բովանդակ Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութեան մէջ մեկնարկը տրուեցաւ նոր ռազմավարական ծրագիրի մը: Հիմնարկութիւնը նոր ծրագիրը ընդունեց 2022-ին, իր նոր նախագահին՝ փրոֆեսոր Անթոնիօ Ֆէյժոյի գլխաւորած ռազմավարական վերամշակումի եւ ծրագրաւորումի գործընթացէն ետք: Համաշխարհային տարողութեամբ երկու սկզբունքներ որդեգրուեցան առաջնորդելու համար Հիմնարկութեան գործունէութիւնը. «կայունութիւն» (sustainability) եւ «արդարակշռութիւն» (equity):

2023 թուականը Հայկական Համայնքներու Բաժանմունքին համար եւս եղաւ անցումային տարի մը. եզրափակուեցաւ 2019–2023-ի աշխատանքային ընդհանուր ծրագիրը եւ ձեռնարկուեցաւ նոր հնգամեայ գործունէութեան ծրագիրի մը որ կ'ապահովէր թէ շարունակականութիւն եւ թէ փոփոխութիւն: Բաժանմունքին գործունէութիւնը մնաց կեդրոնացած լեզուի եւ կրթութեան վրայ, բայց նաեւ ներմուծեց հայութեան համար կենսական նոր տարրեր, ինչպէս՝ ժամանակակից արեւմտահայ մշակոյթի նորարարական ծրագիրը, եւ միւս կողմէ յաւելեալ շեշտադրում մը ընկերային գիտութիւններու հիմնաւորումը հետազոտութեան, քննական մտածողութեան եւ վերլուծական ներգրաւուածութեան վրայ:

Հայկական Համայնքներու Բաժանմունքին 2023–2027-ի առաքելութիւնն է՝

Ամրապնդել լեզուն, մշակոյթն ու կրթութիւնը Սփիւռքի մէջ, եւ զարգացնել քննական մտածողութիւնն ու հետազոտական ոլորտը Հայաստանի մէջ

Ներկայ Հնգամեայ ծրագիրը լուսարձակի տակ կ'առնէ երկու հիմնական խնդիրներ. արեւմտահայ լեզուի ու մշակոյթի անկայունութիւնը Սփիւռքի մէջ,

Եւ ներկայի հարցերու հանդէպ քննական հետազոտութեան բացակայութիւնը Հայաստանի մէջ:

Բաժանմունքին նպատակն է հետեւաբար աշխատիլ, ունենալու կայուն սփիւռքեան համայնքներ, ուր հայ մշակոյթը, ինքնութիւնն ու կրթութիւնը ամրապնդուած են, եւ խրախուսել ազգային հարցերու նկատմամբ լայնախոհ քննական մօտեցումները Հայաստանի մէջ: Այս նպատակին հասնելու համար Բաժանմունքը կը հովանաւորէ մշակութային, կրթական, հետազօտական եւ բարեգործական զանազան նախագիծեր, որոնք դրական ներգործութիւն կ'ունենան հայկական աշխարհին վրայ՝ արտացոլելով անոր երկակ բնոյթը՝ Սփիւռք եւ Հայաստան:

Հայկական Համայնքներու Բաժանմունքին գործունէութիւնը կ'իրականացուի չորս հիմնասիւններով կամ առանցքային առաջնահերթութիւններով.

- 1. Արեւմտահայերէն լեզու,**
- 2. Մշակութային ստեղծագործութիւն եւ զարգացում,**
- 3. Հետազօտութիւն եւ քննական ներգրաւուածութիւն Հայաստանի մէջ,**
- 4. Համալսարանական կրթանպաստներ:**

Բաժանմունքը կը տնօրինէ նաեւ **Յատուկ պարագաներու նպաստ** մը:

Կայունութիւնը եւ արդարակշռութիւնը ընդելուզուած են այս բոլոր առաջնահերթ ոլորտներուն՝ առանց աշխարհագրական բաժանումներու, եւ կ'արտացոլեն աշխարհատարած հայ համայնքներու փոխկապակցուած բնոյթը:

Առաքելութիւն

Ամրապնդել հայոց լեզուն, մշակոյթն ու կրթութիւնը Սփիւռքի մէջ, եւ խթանել հետազօտութիւնն ու քննական մտածողութիւնը Հայաստանի մէջ:

Նպատակ

Ունենալ կայուն սփիւռքեան համայնքներ, ուր հայ մշակոյթը, ինքնութիւնն ու կրթութիւնը ամրապնդուած են, եւ խրախուսել ազգային հարցերու նկատմամբ լայն քննական մօտեցումները Հայաստանի մէջ:

Միջոցներ

Հովանաւորել մշակութային, կրթական, հետազօտական եւ բարեգործական զանազան նախագիծեր որոնք դրական ներգործութիւն կ'ունենան հայկական աշխարհին վրայ՝ արտացոլելով անոր երկակ բնոյթը՝ Սփիւռք եւ Հայաստան:

Առաջնահերթություն 1

Արեւմտահայերէն լեզու



Նպատակ

Երաշխավորել արեւմտահայերէնի կենսունակութիւնը մշակելով ուսուցիչներու զարգացման ծրագիրներ եւ մանկավարժական գործիքներ. հովանաւորել բոլոր տարիքներու համար լեզուի իւրացման նախաձեռնութիւններ. թիրախաւորուած օժանդակութիւն տրամադրել սփիւռքեան դպրոցներուն. նպաստել լեզուի թեքնաբանական կենսական գործիքներու կամ հարթակներու ստեղծումին, եւ օժանդակել տպագիր ու էլեկտրոնային նպատակային հրատարակութիւններու:

Հայկական Համայնքներու Բաժանմունքը 2024-ի ներդրումներ կը կատարէ երաշխաւորելու համար արեւմտահայ լեզուի ու մշակոյթի կենսունակութիւնն ու երկարաժամկէտ կայունութիւնը: ԵՌԻՆԵՍԲՕ-ն «որոշապէս վտանգուած» հռչակած է գլխաւորաբար սփիւռքեան լեզու՝ արեւմտահայերէնը: Հետեւաբար Բաժանմունքին գործունէութեան առաջին հիմնասիւնը կը դիմագրաւէ այս մարտահրաւերը՝ որդեգրելով համապարփակ մօտեցում:


Բաժանմունքին նպաստները բաց են բոլորին, այնքան ատեն որ առաջադրուած նախաձեռնութիւնները համահունչ ըլլան սահմանուած առաջնահերթութիւններուն, ծրագրաւորուած՝ դրական արդիւնքներ ապահովելու նպատակով: Կրթական ծրագիրներու մշակումը, ուսուցիչներու վերապատրաստութիւնը, լեզուն ամրապնդելու ծառայող թեքնաբանութեան գործածութիւնը, հրատարակութիւններն ու մանկապատանեկան ծրագիրները բոլորն ալ մաս կը կազմեն առաջնահերթութիւններու այս շրջարկին: Կ'օժանդակենք հայալեզու հեղինակներու, թարգմանիչներու եւ հրատարակիչներու, իրականացնելու համար նոր գրութիւններու հրատարակութիւնը՝ մանկապատանեկան գրականութենէն մինչեւ 20-րդ դարու դասականներ եւ ժամանակակից վիպագրութիւն, ներառեալ թուային, ձայնային եւ բազմազիտակարգային հրատարակութիւններ:

Բաժանմունքին ռազմավարութիւնն է ստեղծել անլի գործուն եւ կայուն սփիւռքեան համայնքներ, որոնք կենսունակ են՝ մշակոյթով եւ լեզուով: Այս առումով Բաժանմունքին գործունէութիւնը հետամուտ է ընդգրկելու զանազան տարիքային խումբեր եւ հովանաւորելու բազմատեսակ նախագիծեր: Լեզուի մը կենսունակութիւնը ապահովելը բազմակողմանի ուղղուածութեան գործընթաց է որ կը պահանջէ աշխատանք մը տարբեր մակարդակներու վրայ, բազմաթիւ ոլորտներու մէջ եւ աշխարհի տարածքին բազմաթիւ գործընկերներու հետ: Բաժանմունքը այս մէկը կ'իրականացնէ աշխատելով շահագրգիռ զանազան կողմերու հետ, աշխոյժ ներգրաւուածութեամբ: Ան կ'երաշխաւորէ ներդաշնակութիւնը առկայ եւ նոր նախագիծերու միջեւ՝ տարբեր անձերու առիթ տալով գործել արեւմտահայերէնով:

Գործունէութեան այս հիմնասիւնով Բաժանմունքը կը կիրարկէ համապարփակ մօտեցում մը, ներառելով կրթութեան, մշակոյթի ու լեզուի կենսունակութեան նորարարական եւ ժամանակակից մօտեցումներ:

Առաջնահերթություն 2

Մշակութային ստեղծագործություն եւ զարգացում



Նպատակ

**Հայերենով արտադրել
մշակութային բովանդակություն
մը, որ քննական ձեւով կ'առնչուի
աշխարհին հետ, կեդրոնական
դիրքի վրայ դնելով մշակոյթը
իբրեւ միջոց ստեղծարարութեան,
լեզուի զարգացման եւ
ընկերային փոխակերպումի,
ինչ որ կրնայ նպաստել դրական
փոփոխութիւններու, նկատի
ունենալով որ մշակոյթը կենսական
դեր կը խաղայ յարակցական,
ատակ եւ կայուն ընկերութիւններ
կառուցելու մէջ:**

Հայկական Համայնքերու Բաժանմունքը կը հովանաւորէ արեւմտահայերենով
մշակութային արտադրութիւններ խթանող նախաձեռնութիւններ:
Բաժանմունքին մշակոյթի պատկերացումը պահպանում է կրկնութենէ
անդին կ'անցնի, մասնաւորաբար կեդրոնանալով ստեղծարարութեան,

նորարարության եւ նոր մշակոյթ մը գոյացնելու վրայ՝ հաշուի առնելով մշակոյթի փոխակերպող ուժը, եւ ճամբայ հարթելով մշակութային յառաջադէմ կիրարկումներու: Լեզուին եւ մշակոյթին անքակտելի կապէն մեկնած կը ձգտինք այս երկուքը ծառայեցնել աւելի ամուր հիմերու կերտումին՝ ի նպաստ երկարաժամկէտ, մարդակեդրոն եւ ճկուն զարգացման յարացոյցներու:


Մշակութային ստեղծագործութեան բաժինը կը քաջալերէ նորարարութիւնն ու ժամանակակցութիւնը խթանելով այլընտրանքային պատկերացումներ՝ հիմնուած ժողովրդավարական արժէքներու եւ կայուն ապագայի միտող կիրարկումներու վրայ, ներառեալ կենսամիջավայրի կայունութիւնը, Անիկա մէկ կողմէ կը նպատակադրէ կապակցել հայութեան անցեալը, ներկան եւ ապագան, միւս կողմէ կը ձգտի հայկական փորձառութիւնը աղերսել միջազգային կիրարկումներու հետ: Օրինակ մըն է «արդ. եւս»/in view ծրագիրը որ մեկնարկեցինք ի տես արեւմտահայ մշակոյթը եւ ընդհանրապէս հայ մշակոյթը ժամանակակցութեամբ օժտելու մեծ անհրաժեշտութեան: Նպաստի այս ծրագիրը կը ձգտի օժանդակելու համամարդկայինին առնչուած զանազան նախագիծերու, միաժամանակ ջանալով արեւմտահայերէնը վերածել ապագահայեաց, ինքնատիպ եւ առաջատար լեզուի:

Կարճ խօսքով Բաժանմունքը մշակոյթի նկատմամբ իր մօտեցումով կը միտի լրացնելու Սփիւռքին վերաբերող երկու բացեր. առաջին՝ խրախուսել արեւմտահայերէնով ստեղծարարութիւնը որ կը կառուցուի անցեալին վրայ սակայն չի թակարդուիր անցեալին մէջ, երկրորդ՝ օգնել կամրջելու վիհը արեւմտահայ մշակոյթին եւ համաշխարհային ժամանակակից խնդիրներուն կամ ուղղութիւններուն միջեւ՝ քաջալերելով լեզուին հաղորդականութիւնը աշխարհին հետ:

Գործունէութեան այս հիմնասիւնով Բաժանմունքը կը նպատակադրէ վերաշխուժացնել արեւմտահայերէնը եւ մշակութային ժամանակակից ստեղծարարութիւնը զարգացնել մարդակեդրոն, երկարաժամկէտ արդիւնքներու ձգտող եւ համընդհանուր արժէքներու վրայ հիմնուած վերականգնողական մօտեցումով:

Առաջնահերթություն 3

Հետազոտություն Եւ քննական ներգրավուածություն Հայաստանի մէջ



Նպատակ

**Ամրապնդել հետազոտութիւնը
եւ քննական մօտեցումները
աշխարհասփիւռ հայութեան
համար մեծ կարելորութիւն
ունեցող այժմու հարցերու շուրջ՝
ընտրելով քաղաքականութիւններու
մշակումի ուղղուած հետազօտական
ծրագիրներ, էական զօրակցութիւն
ցուցաբերելով հետազօտական
կեդրոններու եւ հովանաւորելով
միջազգային կարելոր
հրատարակութիւններու հայերէնի
թարգմանութիւնը:**

Հայկական Բաժանմունքին համար գործունէութեան կարելոր
ոլորտ մը կը կազմէ Հայաստանի մտաւորական յառաջդիմութիւնը,
մասնաւորաբար ընկերային եւ մարդկային գիտութիւններուն մէջ: Այս
ոլորտը կը միտի ամրապնդելու Հայաստանի եւ հայութեան դիմագրաւած
ներկայի հիմնահարցերուն առնչուող հետազօտութիւնը եւ քննական
ներգրաւուածութիւնը: Լուրջ, հաւասարակշռուած եւ հիմնաւորուած

հետազոտությունները, ինչպես նաև հայերեն թարգմանություններու միջոցով միջազգային կարելու գրություններու ծանօթացումը առիթ կու տան յաւելեալ հմտութեամբ անդրադառնալու ազգային հիմնահարցերու, կ'ընդլայնեն քննական մօտեցումները, կը խրախուսեն մտաւորական ստեղծարարութիւնը եւ կը պատրաստեն քաղաքականութիւններ մշակելու ամուր հիմքեր: Աւելին. այս բոլորը «հայերէնով» ընելը կ'երաշխաւորէ ընթերցանութեան տարածումը երկրին մէջ եւ կը նպաստէ լեզուի զարգացումին:


Առաջատար օրինակ մըն է «Գալուստ Կիւլպէնկեան Թարգմանական Մատենաշար»ը: Բաժանմունքը կը հովանաւորէ բազմաթիւ յատկանշական գործերու հայալեզու հրատարակութիւնը՝ կեդրոնանալով 20-րդ եւ 21-րդ դարերու ժամանակակից ակադեմական ամենէն ազդեցիկ գրություններու թարգմանութեան վրայ: Կ'ընտրենք գործեր որոնք նշանակալից ներգործութիւն ունեցած են արեւմուտքի փիլիսոփաներու, ընկերաբաններու, հետազոտողներու եւ ուսանողներու մտածողութեան վրայ. կարելու գիրքեր, որոնք ոչ միայն ազդեցութիւն գործած են ընկերային գիտակարգերու եւ վերլուծաբանական հենքերու զարգացումին վրայ, այլեւ աշխարհի ընկալումը վերասահմանած են զանազան մտաւորականներու, առաջնորդներու եւ քաղաքականութիւններ մշակողներու հեղինակութեամբ:

Բաժանմունքը նաև կը հովանաւորէ Հայաստանի եւ Սփիւռքի առնչուած հետազօտական եւ դաստիարակչական բազմալեզու յատուկ ծրագիրներ՝ վաւերագրական կարճ տեսանիւթերէ եւ պատկերասփիւռի դաստիարակչական յայտագիրներէ մինչեւ հանրային կարծիքը ուսումնասիրող բազմամեայ հարցախոյզներ, ակադեմական յօդուածներ եւ ժամանակակից հարցեր արծարծող գիրքեր:

Գործունէութեան այս հիմնասիւնով Բաժանմունքը կը ձգտի խթանելու առաջնակարգ հետազօտութիւնը եւ զարգացնելու քննական մտածողութիւնը, որոնք հիմքն են ամուր քաղաքականութեան մշակումին:

Առաջնահերթություն 4

Համալսարանական կրթանպաստներ



Նպատակ

Օժանդակել հայ ուսանողներուն ստանալու բարձրագոյն կրթութիւն, եւ զարգացնել հայագիտութեան ոլորտը՝ օժանդակելով մասնագէտներու եւ հետազօտողներու, յատուկ ուշադրութիւն դարձնելով ժամանակակից նիւթերու:

Աշխարհի տարածքին հայ ուսանողներու եւ հայագիտութեան հետեւողներու համալսարանական կրթանպաստի տրամադրումը Հայկական Համայնքներու Բաժանմունքին գործունէութեան առանցքներէն մէկը եղած է 1957-էն, այսինքն իր հիմնադրութենէն ի վեր: Ղեկավար պաշտօններ վարող բազմաթիւ ականաւոր հայեր Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութենէն կրթանպաստ ստացած են երբ համալսարանի ուսանող էին: Այս կրթանպաստներուն շնորհիւ աշխարհի տարածքին հազարաւոր ուսանողներ կրցած են բարձրագոյն կրթութիւն ստանալ: Հայկական Բաժանմունքէն կրթանպաստ ստացողներու շարքին են երկու Նոպէլեան մրցանակակիրներ, ինչ որ ցոյց կու տայ կրթանպաստներու հսկայական ներգործութիւնը:

Կրթանպաստները ըստ էութեան արդարակշռութեան միջոցներ են: Անոնք ուսանողներու առիթը կու տան օգտուելու բարձրագոյն կրթութեան հնարաւորութենէն եւ իրականացնելու իրենց ամբողջ կարողականութիւնը: Կրթանպաստները ուսումը մատչելի կը դարձնեն, յատկապէս այն երկիրներուն մէջ ուր համալսարանական կրթութեան յատկացում

նպաստները անբաւարար են: Բաժանմունքին կրթանպաստներու ծրագիրը կը կեդրոնանայ ընթացաւարտ աստիճանի հայագիտութեան վրայ. բնագաւառ մը ուր նպաստատուութեան առիթները սահմանափակ են. այս ծրագիրը բարգաւաճող երկիրներէ կամ երկիրներու մէջ նախընթացաւարտ հայ ուսանողներուն կը շնորհէ որեւէ բնագաւառի մէջ մասնագիտանալու առիթը: Իսկ կարճաժամկէտ երկու կրթանպաստային ծրագիրները՝ հայագիտութեան եւ գիտաժողովներու ճամփորդական նպաստները, կը միտին խրախուսելու հայագիտական նիւթերու իմացութիւնը եւ ձեռքբերելու միջազգային փորձառութիւններ:

Բաժանմունքը կրթանպաստ կը շնորհէ հետեւեալ չորս ենթաբաժիններուն.

1. Հայագիտութեան ընթացաւարտ աստիճանի կրթանպաստներ,
2. Բարձրագոյն կրթութեան նպաստներ՝ բարգաւաճող երկիրներէ կամ երկիրներու մէջ հայ ուսանողներու (գլխաւորաբար նախընթացաւարտ, բոլոր նիւթերու մէջ),
3. Հայագիտական հետազոտութիւններու կարճաժամկէտ նպաստներ,
4. Գիտաժողովներու եւ ճամփորդական կարճաժամկէտ նպաստներ՝ Հայաստանի մէջ երիտասարդ հետազոտողներու (բոլոր նիւթերու մէջ):

Բաժանմունքը նաեւ սահմանափակ թիւով կրթանպաստներ կը տրամադրէ Փորթուկալի մէջ ուսանող հայ համալսարանականներու:

Գործունէութեան այս հիմնաստիւնով Բաժանմունքը ներդրում կ'ունենայ հայութեան ապագայ ղեկավարներու եւ մտաւորականներու պատրաստութեան մէջ, զօրակցութիւն կը ցուցաբերէ գիտական գերազանցութեան եւ կը խթանէ ինքնատիպ հետազոտութիւնը հայագիտութեան բնագաւառին մէջ:

Յատուկ պարագաներու նպաստ

Չորս հիմնասիւններուն կողքին, Բաժանմունքը ունի նաեւ Յատուկ պարագաներու նպաստի ծրագիր, որ կը ծառայէ արձագանգելու անսպասելի զարգացումներու, ինչպէս՝ մարդասիրական օժանդակութիւն տրամադրելու ճգնաժամերու պարագային, նաեւ ընդունելու նախաձեռնութիւններ որոնք չեն նախատեսուած, բայց ընդհանուր առմամբ համահունչ են Բաժանմունքին ռազմավարական նպատակներուն: Այս նպաստը տեղ կու տայ ճկունութեան՝ լուծում բերելու յարափոփոխ աշխարհի այժմու կարիքներուն եւ հեռանկարներուն: Նպաստի այս ծրագիրը «հակազդելու» միջոց մըն է, որ Բաժանմունքին առիթ կու տայ ընդառաջելու ըստ կարիքի եւ հնարաւորութեան:

Եզրակացութիւն

Իբրեւ նպաստամատոյց հաստատութիւն, Հայկական Համայնքներու Բաժանմունքը նիւթական միջոցներ կը տրամադրէ իր առաջնահերթութիւններուն եւ գործունէութեան ուղղութիւններուն համահունչ նախաձեռնութիւններու: Կը գործակցի Սփիւռքի եւ Հայաստանի մէջ տարբեր անհատներու եւ կազմակերպութիւններու հետ որոնք կը մշակեն եւ կ'իրականացնեն յստակօրէն սահմանուած կարիքներ բաւարարելու միտող ծրագիրներ: Բաժանմունքը նախապատուութիւն կու տայ ինքնատիպ եւ յառաջադէմ նախաձեռնութիւններու, որոնք կը ձգտին լուծելու հարց մը, նաեւ կը մշակէ նոր նախաձեռնութիւններ եւ կը փնտռէ զանոնք իրականացնելու ատակ գործընկերներ:

Նպաստատուութիւնը նաեւ կ'ենթադրէ «Ելքի ռազմավարութիւններ», այսինքն՝ ապահովել կարելոր ծրագիրներու կայունութիւնը դրամական օգնութեան աւարտէն անդին: Հոսկէ՝ Բաժանմունքին շեշտադրումը նպաստառուներուն՝ յանձնառութեան եւ ծրագիրներու հետագայ շարունակութիւնը ապահովելու: Ասիկա կարելի կը դարձնէ ձեռքբերումներու եւ քաղուած դասերու վրայ հիմնուած նոր ուղղութիւններու եւ նախաձեռնութիւններու մշակումը:

Հայերը թէ՛ Սփիւռքի եւ թէ՛ Հայաստանի մէջ կը դիմագրաւեն բազմատեսակ մարտահրաւերներ. պատերազմի եւ տնտեսական ծանր ճգնաժամի պատճառով համայնքներու քայքայումէն, մինչեւ լեզուի կենսունակութեան անկում, մտաւորական լճացում եւ սփիւռքեան նորաստեղծ համայնքներու առնչուած դժուարութիւններ: Համաշխարհային հարցեր, ինչպէս կլիմայական աղէտներ եւ աշխարհաքաղաքական մեծ փոփակերպումներ անհամեմատօրէն ժխտական ազդեցութիւն կը գործեն փոքր երկիրներու եւ ժողովուրդներու վրայ: Այսպիսի շրջարկի մէջ է որ կը գործէ Բաժանմունքը եւ կը ձգտի հայկական համայնքներն ու ինքնութիւնը ամրապնդել միջազգային գետնի վրայ: Լուրջ շեշտադրումի առարկայ են երիտասարդութիւնը, նորարարութիւնը եւ դրական ներգործութիւնը՝ թէ՛ անհատական եւ թէ՛ ընկերային մակարդակներու վրայ:

Կարճ խօսքով՝ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Համայնքներու Բաժանմունքին գործը աշխուժացնող հիմնական գաղափարը աշխարհատարած հայութեան զօրակցիլն է: Ասիկա կ'իրագործուի նախագիծերու տրուած նպաստներու, կրթանպաստներու եւ բարեգործական

այլ գործունեություններու միջոցով: Բաժանմունքին նպաստատուութեան ծիրը կ'ընդգրկէ մարդասիրական օժանդակութենէ մինչեւ մանկապատանեկան ծրագիրներ եւ գեղարուեստական ստեղծագործություններ: Ան կ'ուղեկցի համայնքներուն ճգնաժամի ժամանակ եւ կ'աշխատի անհատներու ու կազմակերպություններու հետ խթանելու համար անոնց վերականգնելու կարողութիւնը: Հետեւաբար շարունակականութիւնն ու փոփոխութիւնը հիմնական տարրերն են որոնք առանցքը կը կազմեն Բաժանմունքին առկայ Հնգամեայ ծրագիրին:

